Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար սեղանների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/14 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

15 մայիսի 2026թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Ղազարյան*, Վ.Քեռյան, Ա.Դարբինյան, Գ.Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

*Նիստից բացակայում է Տ.Ղազարյանը:

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտերի գնահատման մասին

1.1 Նիստը վերսկսվեց 15.05.2026 թվականին: Հանձնաժողովն արձանագրեց, որ ԲԵՍԹ ՖԻՐՄ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

1.2 Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ԲԵՍԹ ՖԻՐՄ ՍՊԸ-ի, Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ

15.05.2026թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ԲԵՍԹ ՖԻՐՄ ՍՊԸ-ին, Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժնով ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակիցներ, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2 Հաստատել Ընթացակարգի Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Անգործության ժամկետ է սահմանվում Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի
Նախագահ — Վարդան Թորոսյան

անդամներ՝ — Վազգեն Քեռյան

Արսեն Դարբինյան

Գրիգոր Ավետիսյան

քարտուղար՝ — Հերմինե Սաղաթելյան